# ՍԻՈՆ

1938 — ՄԱՅԻՍ — Թիւ 5



**Տ. Տ. ԽՈՐԷՆ Ա.**

ՀԱՆԳՈՒՑԵԱԼ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

# ՁԱՅՆ ԳՈՒԺԵԱՑ

ՅԱՅՐԱՐԱՏԵԱՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ

ԵԹԷ ՈՉ ԵՒՍ Է

ՀՈԳԵՒՈՐ ՏԷՐՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՅՐԱՊԵՏՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

## Տ. Տ. ԽՈՐԷՆ Ա.

ՄՐԹԱՉՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ

ՈՐ

ԼՑԵԱԼ ԶԸՆԹԱՑՍ ՄԱՀԿԱՆԱՑՈՒ ԿԵՆՑԱՂՈՅՍ

## ՓՈԽԵԱԼ Է ՅԱՆՓՈՓՈԽԵԼԻՆ

Ի ՏԱՍՆԵՐՈՐԴՈՒՄ ԱՒՈՒՐ ԱՅՍՐ ԱՄՍԵԱՆ,

Ի ՎԱԹՍՆԵՐՈՐԴՈՒՄ ԵՒ Ի ՀԻՆԳԵՐՈՐԴԻ ԱՄԻ ԿԵՆԱՑ ԻՒՐՈՑ

ԵՒ Ի ՎԵՑԵՐՈՐԴՈՒՄ ԱՄԻ ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԻՒՐՈՅ

ՀՈԳԵՈՐԱՆԴՆ ՍԻՐՈՎ ԵՒ ԼԻ ԱՐԴԵԱՄԲՔ ՎԱՍՏԱԿԵԱԼ

Ի ՓԱՌՍ Ս. ԵԿԵՂԵՑՒՈՅ

---

## ՏԷՐ ՅԻՍՈՒՍ ՀԱՆԳՈՒՍՑԷ ԶՀՈԳԻ ՆՈՐԱ Ի ԼՈՅՍ ԵՐԵՍԱՑ ԻՒՐՈՑ

---

*Ի ՍՈՒԳ ՏՐՏՄՈՒԹԵԱՆ ԽՄՈՒՑ, ՈՐՊԷՍ ՈՐԴԻՔ ՀԱՐԱԶԱՏՔ Ի ՎԵՐԱՅ ԾՆՈՂԻՆ ԻՒՐԵԱՆՑ, ԱՄԵՆԱՅՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ ՄԵՐ Ի ՀԱՅԱՍՏԱՆ, Ի ՍԱՀՄԱՆԱՄԵՐՁ ԵՐԿԻՐՍ ՆՈՐԱ ԵՒ Ի ՍՓԻՒՌՍ ԱՇԽԱՐՀԻ. ԼԱՑԻՆ ԱՄԵՆԵՔԵԱՆ ԶՀՈՎԻՒՆ ԱՆՁՆԴԻՐ ԵՒ ԶՀԱՅՐՆ ՀԱՍԱՐԱԿԱՑ։*

*ԱՂՕԹՍ ԱՐԱՍՑՈՒՔ ՊԱՇՏԱՄԱՄԲ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԵՒ ՄԱՏՈՒՑՄԱՄԲ Ս. ՊԱՏԱՐԱԳԻ ՎԱՍՆ ՀՈԳՒՈՅ ԵՐՋԱՆԿԱՅԻՇԱՏԱԿ ՀԱՅՐԱՊԵՏԻՍ, ԵՒ ՎԱՍՆ ԶԻ ԱՋ ԲԱՐՁՐԵԼՈՅՆ ՀՈՎԱՆԱՒՈՐ ԵՂԻՑԻ Ի ՎԵՐԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅՍ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ։*

Ի 16 ԱՊՐԻԼԻ 1938
Ի ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱՂԷՄ